



Թափափուկ Բո-Բա :

ԹԱԳԱԳՆՈՒԻՒՆ՝ ըստածը՝ ԹուԹա-
կի՝ տեսակներուն մէջ խիստ աղուոր-
ներէն մէկն է՝ գոյնզգոյն փետուրնե-
րով : Չայնը հասարակ ԹուԹակին
ձայնէն ախորժելի է, կամ գէթ ա-
նոր ձայնին չափ գէշ չէ, և անոր պէս
ալ կրնայ խօսիլ սորվիլ՝ բայց շատ
դժուարութեամբ : ԹուԹակին ու-

րիշ զանազան տեսակներէն ասով
կրտարբերի որ պոչը սովորաբար քա-
ռակուսի կըլլայ . գլխուն վրան ալ
Թագի կամ կատարքի պէս տնկուած
փետուրներ կունենայ . աս փետուր-
ները բարկութեան կամ մեծ ուրա-
խութեան մը մէջ եղած ատենը կը-
շտկուին, ու անով աւելի գեղեցիկ
կերենայ : Բնական շարժմունքը և
մարմնոյն կոտորտուածքը շատ սիրուն
վայելչութիւն մը կուտան իրեն : Ըն-

1 Եւրոպացիք ասոր անունը ձայնէն առնելով՝
Բ-Կ-Կ-Կ (Kakatoës) գրած են :

2 Տ-Գ-Գ-Գ-Գ, Գ-Գ-Գ-Գ :

կէ զատ՝ խիստ շուտ կրնտանենայ ու կըհնազանդի ոչ միայն իրեն կերակուր տուողին, հապա նաև որ և իցէ ան- ծանօթ մարդու որ հետը խօսի : Եւ թռչունս պահել ուղողը աղէկ պէտք է նայի որ տանը մէջ կամ անոր կե- ցած սենեակը կահ կարասիք չգըտ- նուի . վասն զի մէկ զարմանալի ու փնասակար սովորութիւն մը ունի աս թռչունս որ կարծր ու սուր կտուցովը ինչ բան որ գտնէ՝ իբր թէ անով խա- ղալու պէս կըկըտցէ, կըկըծէ, կապա- կանէ, թէ լաթեղէն ըլլայ և թէ փայտեղէն : Եւ որ համար, որպէս զի աս փնասները չըլլան, պէտք է ծառի մը ճիւղ կամ կոճ՝ դնել առջևը, որ ինչ փնաս որ կուզէ ընել՝ անոր վրայ ընէ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երբոր Կոչայ Դը լեզու էելէ, Էնչ Խնայ
Էնելու է Վրան :

ՏՂԱՅ մը լեզու ելլելու ատեն՝ ուրովհետև խելքն ալ աւելի բացուած կըլլայ, ծնողքը առջի ըսած կանոննիս պահելէն զատ՝ շատ զգուշաւոր պիտի ըլլան իրենց խօսակցութեան ու գործողութեանը մէջ, և ամենեւին պիտի չխօսին ու չընեն այնպիսի բաներ որ տղոց սիրտը կարենան աւրել ու չարացնել : Խօսակցութեան կողմանէ իրենց ընելու զգուշութիւնները ասոնք պիտի ըլլան .

Եւ մէն բանէ առաջ պիտի նային ծնողքն որ տղոց առջև յիշոցք՝ չընեն, և ոչ անպարկեշտ ու անհամեմատ խօսքեր բանեցնեն, ոչ բարկութեամբ և ոչ կատակով . պիտի գիտնան որ յիշոցքը սատանայական խօսակցութի մըն է որ սովորաբար կիրքով գործա-

ծուելուն համար՝ տղոց միտքը խիստ շուտ կըմնայ, և ինչուան որ ծերանան՝ չեն մոռնար . բերնով ալ չբանեցնեն նէ՝ իմաստը մտքերնին կապա- կանէ : Եւ նպէս պիտի զգուշանան անէծք ընելու չար սովորութեանէն, որ սուրբ գրքին ըսածին նայելով շատ անգամ ալ կըկատարուի ի պատիժ ծնողաց անկարգութեանը : Տղուն առջև ուրիշի վրայ պէտք է գէշ խօսիլ ու բամբասանք ընել : Տղան յանդիմանելու ատեն պէտք է նախա- տական խօսքեր գործածել . զոր օրինակ ամենեւին պէտք է ըսել, անպատ- անօրէն, չէ, չըլլաւ, շահաւոր, էշ, Էնչ, Գի, Խել, և ասոնց նման անշնորհք և անբանական բառեր . վասն զի տը- ղան այսպիսի կոպիտ խօսակցութիւն- ներէն միայն աս խելքը կըսորվի որ երբոր մեծնայ՝ նոյն բառերը ինքն ալ ուրիշի կըգործածէ : Աստիկ պէտք է զգուշանան նաև սուտ զուր- ցելէն, ուրիշի չարիք ուզելէն, ու վրէժխնդրութեան խօսքերէն : Եւ աս բաներէն ոչ միայն ծնողք պիտի զգուշանան, հապա նաև տան մէջ եղողներն ալ պիտի զգուշացնեն . և թէ որ մէկը յանկարծ սխալի՝ պէտք է յանդիմանեն, տղուն ալ ապսպրեն որ ինքը ամենեւին այնպիսի բաներ չխօսի :

Երկրորդ, մեծ զգուշութիւն պի- տի ընեն ծնողք որ տղոց առջև փնա- սակար ու գէշ պատմութիւններ չը- պատմեն . պատմելու ալ ըլլան նէ՝ մէջի պակասութիւնները իմացնեն կամ վար զարնեն : Եւ պատմութիւն- ներէն ալ զգուշանալու է որ չարու- թիւնը վարպետութեամբ մը եղած կերենայ մէջերնին, ինչպէս են վար- պետութեամբ եղած գողութիւն, ուրիշը խաբել, և այլն : Եւ ասն զի տը- ղան ասանկ բաներ լսելով՝ ինքն ալ կըվառուի ընելու . մանաւանդ երբոր տեսնէ թէ ուրիշները կըխնտան, ու ինչ աղէկ վարպետութիւն է ըսելով կըզարմանան : Եւ խիստ պիտի զգուշա- նան տղոց առջև անհամեմատ պատմու-